Հավելված 3

ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական հմտությունների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2018-2019 ուստարի)

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առջև, որպես կրթական հաստատություն, դրված հիմնական խնդիրներից կարևորագույնը աշխատաշուկային համապատասխան որակավորում ունեցող շրջանավարտներ տալն է: Արդյունավետ և բարձրորակ կրթություն ապահովելու համար մասնաճյուղը մշտապես կարևորել է, թե՛ համալսարանականների, և թե՛ արտաքին շահակիցների կարծիքը և առաջարկները:

Հենց այս խնդրից ելնելով, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արտաքին կապերի բաժնի կողմից 2018-2019 ուստարում իրականացվել է հետազոտություն մարզաբնակ գործատու շահակիցների շրջանակներում: Հարցմանը մասնակցել են **50** շահակիցներ: Հետազոտության նպատակն էր, բացահայտել արտաքին շահակիցների կարծիքը և գնահատականը շրջանավարտների մասնագիտական և որոշակի անձնային որակների վերաբերյալ:

Հետազոտությանը մասնակցել են մարզի խոշոր կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, հյուրատների, էլեկտրական ցանցը (ՀԷՑ), դպրոցների հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների ղեկավար անձինք՝ թվով 50 շահակից: Հետազոտությունը անց է կացվել առերես հանդիպում քննարկումներով, որի միջոցով ամրապնդվել է նաև բուհ գործատու կապը և առցանց հարցումով:

Առցանց հարցումն անց է կացվել անանուն, անկեղծ և ճիշտ պատասխաններ ունենալու նպատակով:

Հետազոտության արդյունքները ընդհանուր առմամբ բարձր են և գոհացնող: Ինչը փաստում է, որ մասնաճյուղը կատարել է և շարունակում է զարգացնել իր առջև

դրված գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը, այն է աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ:

Արդյունքը պայմանավորված է մասնաճյուղում բարձրորակ մասնագետների և մշտական հետևողականության առկայությամբ:

Հարցման մեջ ներառվել են շրջանավարտների տեսական գիտելիքների, գործնական հմտությունների և մասնագիտական ընդհանուր կարողությունների գնահատումը:



Ելնելով վերոնշյալ գրաֆիկից, կարող ենք հստակ փաստել ուսանողների լավ մասնագիտական պատրաստվածությունը՝ **80%,** բարձր է գնահատվել նաև ուսանողների տեսական գիտելիքների իմացությունը՝ **80%:** Միջինից բարձր, սակայն ոչ այդքան գոհացնող գնահատական է տրվել ուսանողների գործնական հմտություններին՝ **66%:** Այս երեք համադրությունների արդյունքների համամետումը մի կողմից վկայում է ուսանողների տեսական գիտելիքները բավականաչափ գործնականում չկիրառելու մասին, որը նշանակում է մասնաճյուղի առջև խնդիր է դրված առավել ուշադիր լինել ուսանողների գործնական դասընթացների կազմակերպման և դասընթացների ապահովման համար: Մյուս կողմից համեմատումը որոշ չափով պարադոքսալ է, քանի որ մասնագիտական կարողությունների բարձր գնահատումը արդեն իսկ վկայում է նաև շրջանավարտի անհրաժեշտ չափով գործնական հմտությունների մասին: Ինչը կարող է լինել կամ շահակիցների ոչ ուշադիր պատասխանի արդյունք, կամ պարզապես տեսական բարձր իմացության և շրջանավարտի ընդունակ և արագ ընկալելու արդյունք:

Ցանկացած պարագայում այս խմբից կարելի է որպես խնդիր առանձնացնել ուսանողների գործնական հմտությունների զարգացումը:

Շրջանավարտ-գործատու կապի ստեղծման համար հաջորդ խնդիրը ինքնադրսևորումն է՝ գիտելիքները և հմտությունները ի ցույց դնելու կարողությունը: Հաշվի առնելով այս փաստը, հարցման մեջ ներառվել են հարցեր, պարզելու շրջանավարտների մասնագիտական խոսքի և հաղորդակցվելու կարողությունների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիք գնահատականը:



Ըստ գրաֆիկում պատկերված արդյունքների, կարող ենք եզրակացնել, որ շրջանավարտների մոտ հաղորդակցվելու կարողությունները գոհացուցիչ են՝ **84%**: Ընդհանուր առմամբ, կարելի է լավ արդյունք համարել նաև մասնագիտական խոսքը՝ **72%**, սակայն հաշվի առնելով, որ առերես հանդիպումների ընթացքում շրջանավարտների մոտ մասնագիտական խոսքի ճկունությունը ըդգծվել է, որպես թերի կողմ, կարելի է համարել որ այն դեռ ունի զարգացման կարիք:

Այս խմբից կարելի է որպես խնդիր առանձնացնել մասնագիտական խոսքի զարգացումը:

Հաշվի առնելով, որ մեր կրթական ծրագրերում որպես վերջնարդյունք ներառված է նաև շրջանավարտի ղեկավարելու կարողությունները, հետազոտության մեջ ներառվել են նաև շրջանավարտների կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ կողմերի գնահատականը ըստ արտաքին շահակիցների:



Ելնելով դիագրամից, կարելի է փաստել, որ մեր կրթական ծրագրում նշված վերջնարդյունքը հիմնական չափով ապահովված է, ինչը գոհացուցիչ փաստ է: Ըստ համեմատության, ցածր է գնահատվել շրջանավարտների արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները՝ **68%**: Ինչը կարող է լինել շրջանավարտների աշխատանքի և պրակտիկ փորձի բացակայության, ինչպես նաև խնդրահարույց իրավիճակների բացակայության արդյունք:

Սակայն կարելի է այս խմբից մասնաճյուղի խնդիր համարել շրջանավարտի արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունների զարգացումը:

Հաշվի առնելով ցանկացած ոլորտում դինամիկ զարգացումը, աշխատաշուկայում մրցունակ լինելու համար խիստ կարևոր է նաև ստեղծագործական մոտեցումները և ճկուն աշխատելաոճը: Դրա համար հետազոտության մեջ ներառվել է նաև շրջանավարտների այս խնդրին անհրաժեշտ մի քանի հատկանիշների ուսումնասիրությունը:



Ելնելով վերոնշյալ գրաֆիկից, կարող ենք փաստել, որ շրջանավարտների թիմային աշխատանք կատարելու ունակությունները շահակիցների **82%-ը** գնահատել են լավ, շրջանավարտների վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը, շրջանավարտների գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողություններ հարցերին շահակիցներից **80%-ը** ևս գոհացնող պատասխաններ է տվել:



Ընդհանուր հմտություններ հարցերին շահակիցների **84%-ը** շրջանավարտների ինքնազարգացման ձգտումը հարցին գոհացնող է պատասխան են տվել:

Շրջանավարտների ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունները հարցին շահակիցներից **74%-ը** գնահատել են լավ:



ԵՊՀ ԻՄ-ի հեղինակությունը Ձեր կազմակերպությունում և ԵՊՀ ԻՄ-ի հեղինակությունը տարածաշրջանում հարցերին շահակիցներից **88%-ը** գնահատել են բարձր, որը բավականին լավ ցուցանիշ է:



Հարցման մեջ եղել են հարցեր, որոնց միջոցով փորձել ենք հասկանալ արդյոք շահկիցները խորհուրդ կտան իրենց մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ հարցվողներից **49-ը** նշել է այո, իսկ **1-ը** ոչ:

ԵՊՀ ԻՄ-ում նոր մասնագիտության և/կամ մասնագիտացման կարիք կա հարցին շահակիցները առաջարկել են պահանջարկ ունեցող մասնագիտությունների ցանկ: Հիմնականում նշել են հետևյալ ոլորտները.

4%-ը նշել է՝ մարքեթինգը, PR, կառավարում, լրագրության ոլորտը մարզում շատ թերի է, այդ պատճառով արդյունավետ կլինի, եթե մասնաճյուղում բացվեն PR հանրային կապեր մասնագիտությունները:

Հարցվողների **1%-ը** պատասխանել է ունենալ որակյալ ֆինանսիստներ և հաշվապահներ, զբոսավարներ՝ հաղորդակցման հմտություններով, տարածաշրջանի մասին խորը գիտելիքներով և օտար լեզուների գերազանց իմացությամբ, հմտացնել

սերվիս ավարտողներին վերապատրաստել որպեսզի կարողանան ներգրավել տուրիստներ և հմտանան տուր ծառայությունների վաճառքի մեջ:

Քանի որ մարզի դպրոցները աշխարհագրության մասնագետի խնդիր հարցվողների **3%-ը** առաջարկել է, որպեսզի մասնաճյուղը տա աշխարհագրության ուսուցիչներ:

5%-ը նշել է IT ոլորտ, ռոբոտաշինություն, մեքենաշինություն, տեխնիկական (էլեկտրո, էներգո, ջերմո), SS ավելի խորացված ուսուցում, ընդհուպ մինչև նոր առանձին մասնագիտության աստիճանի, հիմնականում տեխնիկական: 1%-ը նշել է գրաֆիկա և դիզայն:

Հարցվողներից նշել են նաև, որ գոյություն ունեցողները մասնագիտությունները ավելի զարգացնեն, ավելի շատ ուշադրություն դարձվի գործնական մասին: **3%-ը** նշել է դեղագիտություն և ֆիզկուլտուրա: Դպրոցները կարիք ունեն նաև ռուսաց լեզու և գրականության, քիմիայի և կենսաբանության ուսուցիչների: Շահակիցներից նշել են նաև թարգմանչություն մասնագիտության մասին: Հարցվողների գարակշիռ մասը նշել է, որ մարզը ունի նաև իրավաբանի խնդիր բացել իրավագիտության և քաղաքագիտություն բաժինները:

Հարցվողների **2%-ը** նշել են կրթել և պատրասատել վաճառքի մասնագետներ, սոցիալական մանկավարժներ, երգ-երաժշտության մասնագետներ, լոգոպեդներ: Քանի որ մարզը հիմնականում գյուղատնտեսական զարգացման կարողություններով և հնարավորություններով մարզ է, ապա կարելի է նաև ունենալ գյուղ ոլորտից մասնագիտություններ՝ խաղողագործություն և գինեգործություն:

Որքանով են ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական գիտելիքները մրցունակ աշխատանքի շուկայում հարցին շահակիցների **4%-ը** պատասխանել են բավարար չափով, **3.5%-ը** պատասխանել են միջին չափով, **5.5%-ը** պատասխանել են բարձր է և մրցունակ աշխատաշուկայում, իսկ շահակիցների **7.5%-ը** տվել են մի քանի հետաքրքիր պատասխաններ.

1. Առաջնային դիրքերում է, բավականին մրցունակ են, քանի որ ԵՊՀ ԻՄ-ը տալիս է լավ կադրեր,
2. ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտներն ունեն լավ տեսական գիտելիքներ, սակայն շատ թույլ են գործնական հմտությունները, իմ կարծիքով պատմական և կիրառական ֆակուլտետները մրցունակ չեն շուկայի համար,
3. Իջևանի պայմաններում գրանցվում է բարձր արդյունք, բայց դա գերազանց գնահատական չի նշանակում,
4. Կատարվելիք ուսման ընթացքում հաշվի առնել շփումը պրակտիկ մասնագետների հետ,
5. Համեմատած Երևանի պետհամալսարանի շրջանավարտի գիտելիքների հետ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտը աճելու և կատարելագործվելու կարիք ունի,
6. Մասնաճյուղը տալիս է այն գիտելիքները, որը որ պետք է ուսանողներին, միայն մնում է լավ սովորել և լինել մրցունակ աշխատաշուկայում,
7. Շրջանավարտը ունի մասնագիտական գիտելիքներ, ուղղակի աշխատանքի շուկայի պակաս ունենք,
8. Պրակտիկ գիտելիքների պակաս կա, բացի այդ թերի է լեզուների իմացությունը, ինչն անչափ կարևոր է,
9. Տարածաշրջանում հիմնական աշխատատեղերը ապահովում են ԵՊՀ շրջանվարտերի հաշվին,
10. Տեսական մասով մրցունակ են, սակայն նոր տեխնոլոգիաներով աշխատելու հմտությունների պակաս կա,
11. Տրված գիտելիքները լավ են, բայց ստացածները թույլ են, փորձնական գիտելիքները կաղում են:

Աշխատանքի ընդունելիս հատկապես ինչն եք կարևորում հարցին շահակիցների մեծ մասը գրել են, որ կարևորում են գիտելիքը, շփման հմտությունները, ազնվությունը, նորը սովորելու պատրաստկամությունը,

պարտաճանաչությունը, անձնային որակները, շահակիցներից մեկը նշել է, որ ընդունելիս կարևորում ենք դիմողի կամավորական փորձը, քաղաքացիական ակտիվությունը, բազմակողմանի զարգացվածությունը կամ գոնե պատրաստակամությունը դրանք ձեռք բերելու:

Շահակիցները կարևորել են նաև վերլուծական, ստեղծագործական, թիմում աշխատելու կարողությունները, արագ սովորելու կարողությունը, բարձր առաջադիմությունը ուսումնառության ընթացքում աշխատասիրության և պատասխանատվության զգացումը, բարձրագույն կրթությունը, որը ապահովում է բարձ մակարդակ, աշխատասիրություն, կազմակերպչական ներուժ, բացի մասնագիտական գիտելիքներից կարևոր են նաև մանկավարժական գիտելիքները և շփման կուլտուրան, կազմակերպչական կարգավիճակը, նպատակասլացությունը, ավելիին ձգտելու ցանկությունը, ժամանակի կառավարման հմտությունները, ինքնակրթության ձգտում, ներկայանալի և վստահ լինելը, ճկունություն, մասնագիտական հմտություններ, մարդկանց հետ շփվելու ունակություն, վարվեցողության կանոնների և էթիկայի նորմերի տիրապետելը, ազատ կարծիքի արտահայտում, համակարգչային հմտություններ, մասնագիտական պատրաստվածությունը , ինտելեկտը, վարվեցողությունը, մարդկային որակները, մի քիչ էլ առաջին տպավորությունը, վերլուծելու և մտածելու կարողությունները:

ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների մասնագիտական և մանկավարժական ինչ որակներ կցանկանայիք փոխել հարցի համար ստացել ենք հետևյալ պատասխանները՝ ունենան անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ, աշխատանքային գործընթացին ստեղծագործական մոտեցման ցուցաբերում, ինքնակրթությամբ զբաղվելը, աշխատանքային փորձ երեխաների հետ, ավելի ակտիվ շփում միջավայրի հետ, մագիստրոսի որակավորումը ներմուծել ԵՊՀ ԻՄ, ավելի շատ ուշադրություն դարձվի մասնագիտական օրենսդրական ակտերին և տեղեկագրերին, պրակտիկ գիտելիքների և հմտությունների զարգացում, ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մոտ կուզենայինք տեսնել ավելի շատ նախաձեռնողականություն,

մեթոդական մտածելակերպ, շատ պրակտիկ գիտելիքներ, օտարալեզու աղբյուրներից ու գրականությունից օգտվելու կարողություն, ինչը թույլ կտա ձեռք բերել որակապես նոր հմտություններ, շրջանավարտները տեղեկացված են իրենց մասնագիտական գիտելիքների կիրառման ոլորտների շրջանակներին: Առաջնային խնդիրներից մեկը հաղորդակցվելու կարողությունն է, ուսման ձգտումը: Շահակիցները նշել են նաև, որ ուսանողները պետք է ուսուցման ընթացքում ավելի շատ ձեռք բերեն գործնական հմտություններ, ունենան պատասխանատվության զգացում, կազմակերպչական հմտությունները, գործնական գիտելիքների զարգացման ձգտումը, պրակտիկա զուգահեռ աշխատանք, ցանկալի է որ դպրոց գնա այն ապագա ուսուցիչը, որը իրոք կարող է դառնալ նվիրյալ բոլորը մանկավարժի որակավորում չստանան, փոխելու ոչնիչ չկա:

ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների որ առավելությունները կցանկանայիք ընդգծել հարցին շահակիցները նշել են ակտիվ ուսանողական կյանքը, անկաշկանդությունը, աշխատանքային պատասխանատվությունը, աշխատասիրությունը, արագ կողմնորոշվելու հատկությունը, ինքնակրթությամբ անընդհատ զբաղվելու կարողությունը, բազմակողմանի զարգացած լինելը, գիտելիքները զարգացնելու ձգտումը, դիմացինին օգնելու ցանկությունը, գիտելիքով զինված լինելը, ինտելեկտը, շփման կուլտուրան, շահակիցների 60%-ը նշել են պատրաստակամության և պատասխանատվության զգացումը, ինքնավստահությունը, Իջևանում կրթության հասանելիության հնարավորություն տեղացիների համար, խորը և բազմակողմանի գիտելիքները, համարձակությունը, նպատակասլացությունը, մասնագիտական գիտելիքները, մարզը ապահովում է տեղացի մասնագետներով, ովքեր չեն ձգտի հեռանալ, նրանց մեծ մասը մրցունակ են աշխատաշուկայում, նախաձեռնողականությունը և մարդկային մեծ արժանիքները, փոխըմբռնումը, վարվեցողությունը, էթիկան, համեստությունը, դաստիարակությունը, տեսական գիտելիքների խորությունը, լավ մասնագետների առկայությունը:

Կարողանում են արդյոք ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտները պատշաճ ներկայանալ աշխատանքի ընդունվելու մրցույթներին, եթե ոչ, ապա ի՞նչ խորհուրդներ կտայիք նրանց: Շահակիցների **70%-ը** նշել է այո միանշանակ կարողանում են պատշաճ ներկայանալ հարցազրույցներին, **30%-ը** նշել են՝ հավանաբար կարողանում են:

Մի քանի կետով նշենք շահակիցների կողմից գրված կարծիքներից.

1. Հանդիպել եմ շատ լավ պատրաստված շրջանավարտների, սակայն մեր դիմորդների մեջ վերը նշվածների թվի մոտավոր **10%-ի** սահմաններում է,
2. Մանկավարժության ոլորտում կարողանում են լավ ներկայանալ,
3. Ինքնավստահությունը պակասում է,
4. Թույլ են հարցազրույցի ներկայանալու հմտությունները,
5. Ովքեր գիտելիք են ձեռք բերել՝ այո,
6. Վստահ չեմ, կարծում եմ այստեղ անելիք կա,
7. Կարելի է կազմակերպել ոչ ֆորմալ դասընթացներ որոնք կօգնեն ուսանողներին լինել ավելի ինքնավստահ: Կարծում եմ նաև ԵՊՀ ԻՄ-ի ուսանողներն աշխատաշուկայում առավել մրցունակ կդառնան, եթե նրանք գործընկեր կառույցներում անցնեն փորձառություն (internship). Սա նրանց հնարավորություն կտա ինչպես զարգացնելու իրենց գործնական կարողությունները այնպես էլ իրական պատկերացում կազմել աշխատանքային գործընթացների մասին: Սա կարող է նրանց օգնել նաև հետագայում թեկուզ հենց այդ նույն կազմակերպությունում անցնել աշխատանքի:

Եղել են նաև շահակիցներ ովքեր առիթ չեն ունեցել մեր շրջանավարտների հետ հարցազրույց անցկացնելու:

Ոչ հարցին շահակիցները տվել են հետևյա պատասխանները.

Չեն թերանում իրենց աշխատանքում, հետևաբար որևէ խորհուրդ Ձեր հարցի վերաբերյալ դժվարանում եմ տալ: Շրջանավարտներից մեծ մասը չգիտեն ինչպես և որ կայքերում կարող են փնտրել աշխատանք: Շրջանավարտները երբեմն հոգեպես պատրաստ չեն ընդունվել աշխատանքի, այդ պատճառով պետք է լավ սովորել, լինել ինքնավստահ, պատասխանատու, համարձակ և նախապես պատրաստված լինեն տվյալ աշխատանքի հարցազրույցին: Ուշադիր լինել աշխատանքի մասին հայտարարություններին, ձգտել կարիերայի բարձրացմանը մասնակցել նաև այլ լրացուցիչ դասընթացների և սեմինարների, հնարավորինս ընդգրկուն կերպով ներկայացնել իրենց փորձն ու աշխատանքի անցնելու մոտիվացիան, ուշադրություն դարձվեն ռեզյումեներին, շատ հաճախ ենք հանդիպում վատ կազմված ռեզյումների, որը անշուշտ ազդում է ընտրանքի վրա: Պահել էթիկայի բոլոր նորմերը պատշաճ ներկայանան հարցազրույցներին և ցուցաբերեն ավելի մեծ պատասխանատվություն:

Ձեր կազմակերպությունում աշխատող ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների քանակը հարցին շահակիցները պատասխանել են սկսած մեկ աշխատակցից մինչև **32** աշխատակից: Հարցին պատասխանել է **20** շահակից և ընդհանուր թիվը կազմում է **213** ավելի:

ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտները Ձեր աշխատակիցների որ տոկոսն են կազմում հարցին պատասխանել են **24** շահակիցներ: 24 կազմակերպություններից **33%-ում** աշխատողների կազմում մեր շրջանավարտները կազմում են **1%-ից** քիչ, **16%-ում՝** մինչև **10%**, **21%-ում՝** մինչև **50%** և ավելի: Ընդ որում կազմակերպություններից մեկը նշել է, որ իր աշխատակազմում մեր շրջանավարտները կազմում են **100%**:

ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտներից քանիսն են աշխատում իրենց մասնագիտությամբ հարցին պատասխանել է **26** շահակից: 26 շահակիցների մեջ

10%-ը պատասխանել է ոչ մեկ, մինչև 10 աշխատակից պատասխանել է **40%-ը**, 10-ից մինչև 24 աշխատակից **20 %-ը**, երկու շահակից պատասխանել է աշխատակիցների **50%-ը**:

Նրանցից քանիսն են աշխատանքի ընդունվել մրցույթով հարցին պատասխանել են **22** շահակից, որից **5-ը** պատասխանել է ոչ մեկ, **11-ը** պատասխանել է 1-ից մինչև 10 աշխատակից, ընդունվել է մրցույթով, 3 շահակից պատասխանել է 25 աշխատակից, 2-ը պատասխանել է բոլորը: Շահակիցներից մեկը պատասխանել հետևյալ կերպ «Չեմ կարող ասել, կարծում եմ գերակշիռ մասն աշխատանքի ընդունվել են "ծանոթ"-ի միջոցով: Շատ հաճախ գուցե նաև այն պատճառով, որ այդ երևույթը դեռևս չի վերանում մեզանում»:

Հարցման վերջում շահակիցներին տրվել է նաև հնարավորություն կիսվել իրենց առաջարկություններով: Առաջարկներ գրել են **25** շահակիցներ, հարցման մեջ մեջ կարևորություն ունի շահակիցների կարծիքը, որը կօգնի հասկանալ մեր բացասական և դրական կողմերը:

1. Տալ միմիայն լավ որակի և պատրաստված մասնագետներ : Շնորհակալություն: 1) Վերանայել պրակտիկա կազմակերպելու մոտեցումները: Կարծում են դրանք այլևս արդյունավետ չեն: 2)Վերանայել մասնագիտությունների ցանկը՝ դրանք առավել համապատասխանեցնելով շուկայի իրական պահանջներին: 3)Խրախուսել ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերում՝ ուժեղացնելով միջազգային կապերը, ինչպես նաև համագործակցության եզրեր գտնել ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների հետ կապերը:
   4) Մեծացնել գործընկեր կառույցների ցանցը, ուժեղացնել ներկայիս գործընկերների հետ համագործակցությունը:

2. Ի դեպ արդեն իսկ տեսանելի են փոփոխություններ համալսարանում՝ նոր երիտասարդ կադրերի ներգրավում, գործատուների հետ հանդիպումներ, դասընթացներ, հարցումներ որակի վերաբերյալ:
3. Այսօր աշխատանքային շուկան ավելի շատ պահանջում է տեխնիկական գիտելիքներով հագեցած շրջանավարտներ:
4. Ուշադրության արժանացնեք ռադիոտեխնիկան, առաջարկում եմ ստեղծել լաբորտորիայի տեսքով փոքրկ արտադրամաս տեսական գիտելիքները գործնականի վերածելու համար:
5. Ապահովել գիտելիքների բարձր մակարդակ:
6. Ապահովել դպրոց-համալսարան կապը, կազմակերպել հանդիպումներ, գրական երեկոներ:
7. Հնարավորության դեպքում բացել մագիստրատուրայի տարբեր բաժիններ:
8. Առաջարկում եմ շրջանավարտների որակավորումը, մասնագիտացումը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին:
9. Արդի մրցակցային շուկայում մեծ ուշադրություն է դարձվում սպասարկման որակի վրա:
10. Իմ կարծիքով թերանում են արդի այդ որակը ապահովելուց, բարձրացնել ուսանողների ակտիվությունը,
11. Բացվեն բաժիններ որոնց խիստ կարիքը կա դպրոցում և շրջանավարտները ունենան ավելի մեծ գործնական հմտություններ, դիմորդների ընտրությունը կատարվի ճիշտ և բացվեն պահանջարկ ունեցող բաժիններ,
12. ԵՊՀ ԻՄ շրջանավարտ հասկացությունը շատ մեծ սպեկտր է ընդգրկում:
13. Կարելի է այս հարցաշարը կազմել ըստ մասնագիտությունների:
14. Խնդրում եմ ավելի խիստ մոտեցում և օբյեկտիվություն լինի միասնական քննությունների ժամանակ, հաջողություն եմ մաղթում, հավասարություն բոլորի նկատմամբ, հեռակա ուսուցման ընդունելությունը կազմակերպել ավելի բարձր մակարդակով և ընտրել առավել արժանավորներին:

15. Մասնագիտությունների շրջանակի լայնացում, հիմնականում տեխնիկական, մասնաճյուղում գործեն նաև տարբեր սպորտային խմբակներ, մեր ուսանողներին պետք է ընդգրկել փոխանակման ծրագրերի մեջ, այլ երկրների ուսանողների հետ շփումները էական ազդեցություն կարող են թողնել նրանց վրա, այդ առումով հիանալի գործում է *Eramus* ծրագիրը:
16. Ուսանողներին լիքը ազատություն է պետք, որպեսզի չսահմանափակեն համալսարանական պատերով:
17. Խրախուսել տարբեր ՀԿ-ներին անդամակցելը, քանի որ նրանք ոչ ֆորմալ կրթության հզոր բազա են տրամադրում:
18. Նպաստել քննադատական մտքի զարգացմանը լրագրության և բանավեճերի կազմակերպման միջոցով:
19. Պահպանել ու զարգացնել կապը մայրաքաղաքի ԲՈՒՀ-երի հետ, քանի որ ուսանողները հաճախակի կաղում են ինֆորմացիայի պակասից ու արտաքին աշխարհի կապի բացակայությամբ պայմանավորված խնդիրներից:
20. Շնորհակալություն ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմին և տնօրինությանը որակյալ կրթություն ապահովելու համար,
21. Ուսանողների համար ավելի շատ կազմակերպվեն մոտիվացնող միջոցառումներ և ավելացնել ժամանակակից մասնագիտություններ:
22. Ուսանողների հետ կապը ավելի մեծ լինի, պրակտիկաների արդյունքը նկատելի լինի և կոնկրետ ժամեր մշակվեն պրակտիկաների ժամանակ աշխատանք կատարելու համար:
23. Ուսուցման ժամանակ ավելի շատ ուշադրություն դարձվի գործնական ուսուցման վրա:
24. Պատասխանատվության զգացումը էլ ավելի բարձրացնել ուսանողների շրջանում: ստեղծել ռոբոտաշինության լաբորատորիա, ստեղծել ստրատեգիական զենքեր:

25. Վերջին կուրսերում ստեղծել հնարավորություն լավ ուսանողների համար պրակտիկ/փորձառություններ ձեռք բերել իրենց մասնագիտությունների գծով:

Հարցերը կազմված էին այնպես, որ կարողանանք վերլուծել շրջանավարտների մասնագիտական կարողությունները, աշխատանքի պատրաստվածությունը, աշխատաշուկայի խնդիրները և պահանջված մասնագիտությունները:

Վերլուծությունում ամփոփ ներկայացված են բոլոր հարցերի նկարագրությունները: